



ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

Համառոտ նախնականային զննույց (հրապարակման համար մշակված տարբերակ)

2012թ. հունվար – մարտ

Հայաստանի և Թուրքիայի միջև պաշտոնական հարաբերությունների սառնցման պայմաններում երկու երկրների միջև հարաբերությունների նորմալացման գործընթացը շարունակում է էապես կախված լինել քաղաքացիական հասարակության մակարդակով իրականացվող շփումներից և հասարակական դիվանագիտության շրջանակներում գործադրվող ջանքերից: Այս ջանքերն ուղղված են պահպանելու ստեղծված միտումները և ձևավորելու երկու հասարակություններում բարենպաստ վերաբերմունք միմյանց նկատմամբ մինչև երկու կողմերի միջև պաշտոնական հարաբերությունների վերսկսումը: Չնայած այն հանգամանքին, որ 2012 թվականի ձմեռը և գարնան սկզբին Հայաստան-Թուրքիա հարաբերությունները սրվեցին (այդ թվում՝ ճանաչված ցեղասպանությունների հերքումը քրեականացնող Ֆրանսիայի օրենքի նկատմամբ Թուրքիայի հասարակական ռեակցիայի և փետրվարի վերջին Ստամբուլում 1992 թվականի Խոջալուի իրադարձությունների տարեդարձի նշման արդյունքում), «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը» ծրագրի (SATR) գործընկերների և շահառուների գերակշռող մեծամասնությունը շարունակեց սովորական աշխատանքը և դիմակայեց բացասական հայտարարությունների այս հզոր, սակայն կարճատև հոսքին: Այս իրողությունը վկայում է SATR ծրագրի կողմից ստեղծված ցանցային կառույցների ամրության մասին՝ սադրիչ քաղաքական իրադարձությունների պայմաններում:

Սույն նախնականային SATR ծրագրի գործունեության կարճ նկարագիրը բերված է ստորև.

- Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՍԶՄԿ) և Թուրքիայի տնտեսական և հասարակական ուսումնասիրությունների հիմնադրամը (TESEV) ավարտել են ուսումնական սեմինարների շարքը, որն ուղղված է Հայաստանում և Թուրքիայում տվյալների վրա հիմնված քաղաքականությունների վերլուծության կարողությունների բարձրացմանը: Առաջին երկու ուսումնական սեմինարներն անցկացվել են Անկարայում և Ստամբուլում 2012թ. հունվարի 23-ից 28-ը և Երևանում փետրվարի 1-ից 6-ը: Ի շարունակություն այս դասընթացի՝ 2012 թվականի մարտին Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ), ՍԶՄԿ-ը և TESEV-ը հրավիրեցին մասնակիցներին պատրաստել տվյալների վրա հիմնված ծրագրային փաստաթղթեր՝ նվիրված Հայաստան-Թուրքիա հարաբերությունների և դրանց բարելավման գործընթացի տարբեր հայնցակետերին՝ կիրառելով դասընթացին ստացված գիտելիքները և հմտությունները: Առանձին ընտրված փաստաթղթերը կհրապարակվեն SATR ծրագրի, ԵՀՀ-ի, ՍԶՄԿ-ի և TESEV-ի կայքէջերում: Նշված փաստաթղթերը կտարածվեն Հայաստան-Թուրքիա երկկողմանի հետաքրքրված շահառուների շրջանում՝ ԵՀՀ-ի փոստային ցանկի միջոցով:

- ՄՁՄԿ-ը և թուրքական «GAYA» կազմակերպությունը 2012 թվականի մարտին Երևանում և Դիարբեքիքում ուսումնական սեմինար կազմակերպեցին հայ և թուրք երիտասարդ կանանց համար, ովքեր ակտիվ մասնակցում են քաղաքացիական, գործարար և քաղաքական կյանքին: Դասընթացի նպատակն էր բարձրացնել փոխհարաբերությունների խթանմամբ շահագրգռված հայ և թուրք կանանց բանակցելու, առաջնորդելու և հաղորդակցվելու կարողությունները՝ նպաստելով երկրների և տարածաշրջանների միջև համագործակցության նախաձեռնությունների զարգացմանն ու կենսագործմանը: Դասընթացները կրել են ինտերակտիվ բնույթ, այդ թվում՝ իրավիճակների մոդելավորում, վարժություններ, ձեռք բերված հմտությունների կիրառում, իրական կյանքից քաղված օրինակների իմացություն և այլն: Մի շարք նմանատիպ դասընթացներ իրականացվել են Անկարայում և Երևանում 2012 թվականի փետրվարին ՄՁՄԿ-ի և GAYA-ի կողմից գործարար աշխարհի, քաղաքականության և քաղաքացիական հասարակության մի խումբ հայ և թուրք երիտասարդ առաջնորդների համար՝ խթանելու երկրների և տարածաշրջանների միջև համագործակցության նախաձեռնությունների զարգացումն ու կենսագործումը:
- «Ինքնագիր» գրական ակումբի ծրագրային թիմը 2011 թվականի աշնան վերջին ուղևորվեց Հոպա, որտեղ գտնվում է համշենցիների Թուրքիայի համայնքը: Անցկացված հարցազրույցների հիման վրա Վահան Իշխանյանը պատրաստել է 46 էջանոց զեկույց *հայախոս համշենցի մահմեդականների* վերաբերյալ: Հատվածներ զեկույցից հրատարակվել են հայկական մամուլում և առցանց լրատվամիջոցներում: Արվել է ավելի քան 300 լուսանկար, որոնք հաջորդ եռամսյակում զեկույցի հետ միասին կհրատարակվեն լստասկավառակի վրա: Հոպա այցելության արդյունքները ներկայացվել են հանդիսատեսին 2012թ. մարտի 31-ին տեղի ունեցած փեյա-քուչա ձևաչափով ներկայացմանը:
- SATR ծրագրի «բաց դռներով» դրամաշնորհների ծրագրի շրջանակներում կոնսորցիումը հատկացրեց վերջին երեք դրամաշնորհները: Ծրագրի ընտրական հանձնաժողովի 2012թ. մարտի 13 ժողովի դրությամբ «բաց դռներով» դրամաշնորհների ծրագրի համակազմը սպառվեց և փակվեց: Ընտրված ծրագրերը ներառում են հետևյալը՝ *ա) նրկյեզու պատմական հետազոտության հրատարակում՝ նվիրված Թուրքիայի ներկայիս տարածքում հայերի առևտրին և տնտեսությանը, բ) ՄԱԿ-ի «Ռեյն+20» կայուն զարգացման համաժողովի համար ընդհանուր հայտարարություն պատրաստելու նպատակով հայ և թուրք երիտասարդ բնապահպանների մասնակցությամբ սեմինարի կազմակերպում և գ) մերձեցման գործընթացում կին գործարարների դերակատարման խթանում՝ գործարար կանանց համար Թուրքիայում միջձեռնարկատիրական միջոցառման կազմակերպման միջոցով:* Դրամաշնորհների հատկացումը ձևակերպվելու է 2012 թվականի ապրիլին: Ծրագրերը կավարտվեն 2012թ. օգոստոսի 31-ին:
- Հայկական և թուրքական տուրիստական ընկերությունների ասոցիացիայի (AATTC) անդամները, այդ թվում՝ երեք ընկերություն Հայաստանից և երկուսը Թուրքիայից, մեկնեցին Բեռլին մասնակցելու 2012թ. մարտի 9-ից 13-ը անցկացվող Բեռլինի միջազգային տուրիստական համաժողովին (ITB) և ներկայացնելու AATTC-ն միջազգային տուրիստական համայնքին, հաստատելու գործնական կապեր և ներկայացնելու շուկային տարածաշրջանի տուրիստական առաջարկները, որոնք մշակվել են Հայաստանում և Թուրքիայում AATTC-ի անդամների կողմից:
- Երևանի մամուլի ակումբը (ԵՄԱ) և Իզմիրի տնտեսագիտության համալսարանն ամփոփեցին լրատվամիջոցների մոնիթորինգի արդյունքներն ամբապնդեցին լրատվամիջոցների

հետազոտության առաջին փուլի եզրակացությունները, ըստ որոնց Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների լուսաբանման առումով երկու երկրների լրատվամիջոցներում անհամաչափություն, իսկ արձանագրությունների ստեղծումը բացասաբար է անդրադառնում միմյանց լուսաբանման վրա: Վերջնական զեկույցը հրապարակվելու է 2012 թվականի հունիսին և ուղեկցվելու է շահառուների համար առաջարկություններով առ այն, թե ինչպես բարելավել լրատվամիջոցների կողմից Հայաստան-Թուրքիա հարաբերությունների անաչառ և օբյեկտիվ լուսաբանումը:

- ԵՄԱ-ն և Համաշխարհային քաղաքական միտումների կենտրոնը (GPOI) ձևավորեցին լրագրողների մրցանակաբաշխության ժյուրիի կազմը: Կողմերը միասին համաձայնության եկան, որ լրագրողական մրցանակաբաշխության ժյուրին պետք է բաղկացած լինի չորս հոգուց և ներառի 2011 թվականի մրցանակակիրներին: Ժյուրիի կազմը վերջնականապես հաստատվեց հետևյալ կերպ. Հայաստան՝ նախորդ տարվա մրցանակակիր Էդուարդ Մխիթարյան (Գալա հեռուստարնկերություն), լրագրող Գայանե Աբրահամյան («Eurasia.net» և «ArmeniaNow» կայքեր), «Առավոտ» օրաթերթի խմբագիր Արամ Աբրահամյանը, ինչպես նաև ԵՀՀ-ի տնօրեն Գևորգ Տեր-Գաբրիելյան: Թուրքիայում ժյուրիի կազմում ընդգրկվելու են լրագրողական մրցանակի նախորդ տարվա հաղթող Քադրի Գուրսելը («Milliyet» օրաթերթի մամուլի տնօրեն), Յավուզ Բայդարը («Zaman» օրաթերթ), Մուստաֆա Կարաալիողլուն («Star Gazetesi» օրաթերթ), ինչպես նաև Սիլվիա Թիրյակին (GPOI-ի փոխտնօրեն): Նախատեսված է, որ մրցանակների հանձնման արարողությունը Հայաստանում և Թուրքիայում տեղի կունենա համապատասխանաբար 2012թ. հունիսի 4-ին և հունիսի 14-ին:
- ԵՀՀ-ն հետևել է մի քանի վավերագրական ֆիլմերի նկարահանման նախագծերին, որոնք արժանացել էին SATR ծրագրի աջակցությանը: «Վերադարձ Գյուրուն» վավերագրական ֆիլմի նկարահանող խումբն ուղևորվեց Ստամբուլ կինոնկարի համար լրացուցիչ հարցազրույցներ անցկացնելու նպատակով: Ակնկալվում է, որ ֆիլմի նկարահանումը կավարտվի մինչև 2012 թվականի հունիս ամիսը, իսկ աշխատանքային տարբերակի պրեմիերան կկայանա Երևանում անցկացվելիք «Ոսկե ծիրան» 9-րդ միջազգային կինոփառատոնին: Բացի այդ, «Ռեդիո Վան» կայանը՝ թուրքական «Յոն» ռադիոկայանի հետ միասին, մեկնարկել է վեց 20 րոպեանոց վավերագրական հաղորդումների պատրաստումը «Լյանքի մեկ օր» խորագրով՝ ԵՀՀ-ի և Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանության կողմից համաֆինանսավորվող համատեղ հայ-թուրքական ծրագրի շրջանակներում: Մինչդեռ «Ավտոբուս» վավերագրական ֆիլմը, որն արժանացել է SATR ծրագրի աջակցությանը, գտնվում է նկարահանումներին հաջորդող փուլում: Ակնկալվում է, որ այս ֆիլմերն ավարտուն տեսքի կբերվեն հաջորդ եռամսյակի ընթացքում:
- «Քաղցր 60-ականներ. քաղցր վարանմունք» խորագրով ծրագրի իրագործման վերաբերյալ ԵՀՀ-ն բանակցություններ է սկսել Արվեստի քննադատների ազգային ասոցիացիայի և «Anadolu Kultur» կազմակերպության հետ: Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի և Թուրքիայի հասարակություններին հնարավորություն ընձեռել ճանաչելու երկու հասարակությունների մշակույթը կազմող խոշոր այն արվեստի գործերը, որոնք ստեղծվել են 1960-ականներին և դրել են ժամանակակից հասարակությունների ձևավորմանը նպաստող գաղափարների հիմքը: Ծրագրի շրջանակներում 2012թ. մայիս և հունիս ամիսներին Ստամբուլում և Երևանում նախատեսվում է անցկացնել համաժողովներ, որոնց կմասնակցեն ականավոր կինոփորձագետներ Հայաստանից և Թուրքիայից, որոնք երկու երկրներում 1960-ականների համեմատական վերլուծություններ կկատարեն: Բացի այդ, կցուցադրվեն 1960-ականներին նկարահանված ութ դասական հայկական և թուրքական կինոնկար՝ չորս կինոնկար յուրաքանչյուր երկրից:

- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը (ՀԱԳ(Գ)Մ) և Բիզնեսի զարգացման հայ-թուրքական խորհուրդն (TABDC) ուսումնասիրել են հայաստանյան համացանցի հատվածը թուրքական ցանցին միացնելու հնարավորությունը, ինչը կապահովեր ավելի արագ և պակաս ծախսատար կապ: Ներկայումս ՀԱԳ(Գ)Մ-ը և TABDC-ն վերլուծում են այս հնարավորությունը երկու երկրների SS ոլորտի շահառուների հետ հանդիպումների միջոցով: Ակնկալվում է, որ Հայաստանը զգալիորեն կշահի համացանցի երկու հատվածների միացումից: ՀԱԳ(Գ)Մ-ը և TABDC-ն կշարունակեն ուսումնասիրել այս խնդիրը և կդիմեն շահառուներին՝ դրա վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն հավաքելու, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի միջև գործարքն իրագործելու նպատակով:
- ՀԱԳ(Գ)Մ-ը և TABDC-ն զբաղված են Թուրքիայի կարս քաղաքում հունիսի 15-ից 16-ը կայանալիք Հայաստան-Թուրքիա գործարար համաժողովի նախապատրաստմամբ: ՀԱԳ(Գ)Մ-ը և TABDC-ն կիրավիրեն շուրջ 60 գործարարների, որոնք կներկայացնեն Հայաստանի և Թուրքիայի տարբեր քաղաքներն ու բիզնեսի ոլորտները, այդ թվում՝ թեթև արդյունաբերությունը, շինարարությունը, կահույքի արտադրությունը, հանքարդյունաբերությունը, ոսկերչությունն ու առևտուրը: Համաժողովի ելույթներում կներկայացվեն Հայաստան-Թուրքիա բիզնես համագործակցության ներկայիս վիճակը և հեռանկարները: Մասնակիցները կկարողանան հարևան երկրի իրենց գործընկերների հետ քննարկել բիզնես համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև կայցելեն կարսի շրջանում տեղակայված որոշ ձեռնարկություններ:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և կոնսորցիումի անդամներն աջակցում են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը՝ խթանելով քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի մասնակցությունը, գործարար համագործակցության և տարածաշրջանային մասնագիտական ցանցերի հաստատումն ու զարգացումը, ինչպես նաև ժողովրդի կողմից տարածաշրջանում խաղաղության և տնտեսական ինտեգրացիայի առավել կարևորումը: Այս գնկույցի բովանդակության համար պատասխանատու է կոնսորցիումը: Այստեղ արտահայտված տեսակետները կարող են չհամընկնել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին: